

ԼԻԼԻԹ ՌՈԲԵՐՏԻ  
ԱՐՏԵՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող,  
արվեստագիտության թեկնածու

E-mail: [l.artemyan@mail.ru](mailto:l.artemyan@mail.ru)

Doi:10.58580/18290019-2024.1-2-146

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի  
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 15.6.2025 թ.,  
ընդունվել է տպագրության՝ 4.7.2025 թ.,  
ներկայացրել է հեղինակը՝ 12.12.2024 թ.:

© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution  
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

## Արժեքավոր ներդրում դիրիժորական արվեստում. ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ

### Ամփոփում

Հոդվածում գրախոսվել է վաստակաշատ և տաղանդավոր դիրիժոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Յուրի Դավթյանի «Էջեր օրագրից. Մեկդարյա պատմություն» պատկերազարդ-գիրքը, որը 2024 թվականին հետմահու լույս է ընծայել «ԵՊԿ հրատարակչությունը» ՀՀ վաստակավոր արտիստ, արվեստագիտության թեկնածու, Յ. Հ. Դավթյանի մասնագիտական դասարանի արժանավոր շրջանավարտ Սերգեյ Արմենի Մմբատյանի աջակցությամբ: Առաջին անգամ համակողմանի ուսումնասիրվել և ներկայացվել է Յ. Դավթյանի ինքնակենսագրական հուշագրությունը, քննության են առնվել գրքի հիմնական՝ «Էջեր օրագրից. Մեկ դարի պատմություն» և «Ինքնակենսագրականը կատակներում» բաժինները և հավելվածը: Գիրքը հանրագումարի է բերում տարիներ շարունակ դիրիժորական արվեստի բնագավառում հեղինակի երկարամյա մասնագիտական գործունեության արդյունքները:

Բանալի-բառեր. Յուրի Դավթյան, դիրիժոր, օպերա, ինքնակենսագրություն, հուշագրություն:

### Abstract

Senior Researcher of Institute of Art NAS RA, PhD of Art, Lilit Robert Artemyan. - "Valuable contribution to conducting Art. Yuri Davtyan".

The article reviews the book "Pages of a Diary. A Centuries-old History" authored by Professor Yuri Davtyan, an honored and talented conductor, Honored Artist of the Armenian SSR which was posthumously published in 2024 by the "YSC Publishing House" of Yerevan State Conservatory after Komitas with the support of Sergey Armen Smbatyan, PhD in Arts, Honored Artist of the Republic of Armenia and an honorary graduate of Yuri Davtyan's professional class. For the first time, Yuri Davtyan's autobiographical book-memoir has been comprehensively studied and presented, and the primary sections of it have been considered, such as "Pages of a Diary. A Centuries-old History" and "Autobiography in Jokes," as well as the appendix. The book summarizes the results of the author's extensive professional experience in the field of conducting.

Key Words: Yuri Davtyan, conductor, opera, autobiography, memoires.

### Абстракт

Кандидат искусствоведения, старший научный сотрудник института искусств НАН РА, Лилит Робертовна Артемьян. - "Весомый вклад в дирижерское искусство. Юрий Давтян".

В статье рецензируется книга «Страницы, из дневника. Вековая история» заслуженного и талантливого дирижера, народного артиста Армянской ССР, профессора Юрия Давтяна, которая была посмертно издана в 2024 году «Издательством ЕГК» Ереванской государственной консерватории при поддержке Заслуженного артиста Республики Армения, кандидата искусствоведения, а также достойного выпускника профессионального класса Ю. Г. Давтяна Сергея Арменовича Смбадяна. Впервые комплексно изучена и представлена автобиографическая книга-мемуары. Ю. Г. Давтяна. Рассмотрены, основные разделы, книги: «Страницы, из дневника. Вековая история» и «Автобиография в шутках», а также приложение. В книге обобщены, результаты, многолетней профессиональной деятельности автора в области дирижерского искус-

# Նվիրվում է Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյա հոբելյանին

Անուրանալի է վաստակաշատ և տաղանդավոր դիրիժոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Յուրի Հայկի Դավթյանի (10.6.1929, Ղարաքիլիսա, ՀԽՍՀ – 20.2.2020, ք. Երևան) ներդրումը հայ երաժշտարվեստի զարգացման գործում: Հայաստանի և Խորհրդային Միության առաջատար համերգարահներում նա պրոֆեսիոնալ բարձր մակարդակով ներկայացրել է ինչպես հայ և օտարազգի դասական կոմպոզիտորների երաժշտաթատերական և սիմֆոնիկ ժանրերի ստեղծագործական նվաճումները, այնպես էլ հայ կոմպոզիտորների բոլորովին նոր ձևերում: Շուրջ 70-ամյա ստեղծագործական գործունեության ընթացքում նա անմնացորդ նվիրումով զարգացրել է հայ դիրիժորական արվեստը և նպաստել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի առաջընթացին:

ՀՀ վաստակավոր արտիստ, արվեստագիտության թեկնածու, Յ. Հ. Դավթյանի մասնագիտական դասարանի արժանավոր շրջանավարտ Սերգեյ Արմենի Սմբատյանի աջակցությամբ 2024 թվականին «ԵՊԿ հրատարակչություն»-ը հետմահու լույս է ընծայել Յուրի Դավթյանի «Էջեր օրագրից. Մեկդարյա պատմություն» վերտառությամբ գիրքը, որը հեղինակը նվիրել է ծնողների՝ Աննա Արտակի Ուլիխանյանի և Հայկ Ղուկասի Դավթյանի հիշատակին:

Գրքի գրախոսներն են Սերգեյ Սմբատյանը և Յուրի Դավթյանի դուստրը՝ բանասեր, թարգմանիչ Հասմիկ Յուրիի Բարխուդարյանը:

Առաջաբանը հեղինակել է դաշնակահար, մանկավարժ, Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Սերգեյ Գեորգիի Մարաջյանը, որը բարձր է գնահատել դիրիժորի կատարողական գործունեությանը զուգահեռ ընթացած երկարամյա 70-ամյա մանկավարժական աշխատանքը: Ս. Մարաջյանը նկատել է, որ գիրքը շարադրված է ինքնատիպ կատակներով, որը բացահայտում է դիրիժորի և իր ժամանակի մարդկանց հետ առնչությունների բարձր բարոյականությունն ու բարեկիրթ հարաբերությունները (էջ 7):

Գրախոսվող գրքի կազմողը, մասնագիտական և պատասխանատու խմբագիրը երաժշտագետ, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, Հայաստանի ժուռնալիստների միության և Ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ, հայ մասնագիտական երաժշտական մամուլի հիմնադիր «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր- գլխավոր խմբագիր Գոհար Կառլենի Շագոյանն է: Հատկանշական է, որ Գ. Շագոյանը սույն գիրքը կազմել և հրատարակության է պատրաստել Յուրի Դավթյանի հետ միասին և նրանց համատեղ ընդհանուր առմամբ ութ տարվա աշխատանք է. հրնթացս Դավթյանն իր անձնական արխիվային նյութերն է տրամադրել՝ շարադրանքն առավել ամբողջական և ավարտուն դարձնելու նպատակով: Գ. Շագոյանը «Ժամանակակիցը» վերտառությամբ հակիրճ ակնարկում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Յուրի Դավթյանի մասին երաժշտարվեստի նշանավոր

ներկայացուցիչների՝ կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Էդվարդ Միրզոյանի, դիրիժոր, ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի և դաշնակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Սվետլանա Նավասարդյանի տարբեր տարիներին գրված կարծիքները: Նա նկատում է. «Գիրքն էլ գրվել է համատեղ մասետրոյի հետ կյանքի վերջին երկու տարիների ընթացքում, շտկումներ և ուղղումներ ենք կատարել միասին: Այնուհետև շարունակվել է աշխատանքը դստեր՝ բանասեր, ֆրանսերենի գիտակ թարգմանչուհի Հասմիկ Բարխուդարյան-Դավթյանի հետ» (էջ 8): Բ դեպ, Գոհար Շագոյանը նշում է, որ գիրքը կազմման պատկերազարդելուն մեծապես նպաստել են Սերգեյ Առաքելյանի երկու «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն-90» և «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն 75» պատկերազարդ-ալբոմ հրատարակությունները (էջ 16):

Գիրքն ունի ինքնատիպ շարադրանք, որը բաղկացած է երկու հիմնական բաժիններից և հավելվածից:

«Նախաբանի փոխարեն» համառոտ ներածականում Յ. Դավթյանը հստակ ներկայացրել է ինքնակենսագրական հուշագրություն գրելու նպատակը. «Վաղը ես չեմ կարողանալու բանավիճել, ինչպես ասում են «տեխնիկական» պատճառներով... Դրա համար փաստարկներս բերում եմ նախօրոք և այն ինչ ինձ համար կարևոր է, ինչը հենքն է իմ արվեստին ծառայելու անկոտրում ցանկության, ներկայացնում եմ ինքս» (էջ 17):

«Էջեր օրագրից. Մեկ դարի պատմություն» բաժինը բաղկացած է «XX դարասկզբի հայաստանյան էտյուդներ», «Հայրենական մեծ պատերազմը», «Հետպատերազմյան շրջան», «Մոսկվա» և «Մարատով» ենթաբաժիններից:

«XX դարասկզբի հայաստանյան էտյուդներ» ենթաբաժնում հեղինակը պատկերավոր նկարագրել է 1930-ականների Երևանը և իր մանկության տարիները, հայտնել իր տոհմական ծագումն ու պատկանելությունը հոգևոր դասին: Յ. Դավթյանն անդրադարձել է այդ տարիների երկու հիշարժան իրադարձություններին՝ Կոմիտասի հուղարկավորությանը և Մոսկվայում կայանալիք «Արվեստի և գրականության տասնօրյակի» նախապատրաստական աշխատանքներին, որոնք անջնջելի հետք են թողել նրա կյանքում: Հեղինակը բարձր է գնահատել ջութակի առաջին ուսուցչուհուն՝ Ասյա Տեր-Գրիգորյանին. «Շատ երիտասարդ ու շատ գեղեցիկ այդ կինն արթնացրել է իմ մեջ սեր ու նվիրում երաժշտության և հատկապես ջութակի նկատմամբ» (էջ 20):

«Հայրենական մեծ պատերազմը» ենթաբաժնում Յ. Դավթյանն անդրադարձել է հոր մասնակցությանը պատերազմին, այդ ծանր, սակայն միևնույն ժամանակ հաղթանակի մեծ հույսով և հավատով լցված տարիներին, մտաբերել երաժշտական դպրոցի ավարտական հաջող էլույթը և ջութակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Ավետ Կարպի Գաբրիելյանի հետ առաջին հանդիպումը: Այդ տարիները նշանավորվել են Պ. Չալոյվակու անվան

ՆԱՐ ՄՈՏՅՈՒՄ - նոր հրատարակություն

# Նվիրվում է Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյա հոբելյանին

երաժշտական միջոնակարգ մասնագիտական դպրոցի 8-րդ դասարան ընդունելությամբ, ջութակի ուսուցիչ Դմիտրի Նիկոլայի Լեզկերի մասնագիտական դասարանում ուսումնառությամբ, երաժշտագետ, կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Ռոբերտ Արշակի Աթայանի ղեկավարությամբ կոմպոզիցիայի և լարային քառյակի դասերի մասնակցությամբ: Բ դեպ, հենց այդ ընթացքում է ի հայտ եկել դիրիժորությամբ հետագայում զբաղվելու ճակատագրական ցանկությունը: Յ. Դավթյանը նկատում է. «Տասնամյակում սովորելիս սկսեցի մտածել դիրիժորության մասին» (էջ 21):

«Հետպատերազմյան շրջան» ենթագլխում Յ. Դավթյանն անդրադարձել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա ընդունելությանը, դիրիժոր, ջութակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Կոնստանդին Սողոմոնի Սարաջյանի դիրիժորական մասնագիտական դասարանում ուսումնառությանը, Կոնսերվատորիայի ավարտական քննական հանձնաժողովի որոշմամբ ուսումնառությունը Մոսկվայում՝ ԽՍՀՄ նվագախմբում՝ որպես ստաժոր շարունակելուն: Հեղինակը խորին ակնածանքով և երախտագիտության զգացումով հիշել և բարձր է գնահատել Կոնսերվատորիայում երաժշտատեսական առարկաներ դասավանդող իր դասախոսներին՝ կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ պրոֆեսոր Ղազարոս Սարյանին (գործիքավորում), Ռոբերտ Աթայանին (հարմոնիա), կոմպոզիտոր, դաշնակահար, երաժշտագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գայանե Չեքոտարյանին (պոլիֆոնիա) և դիրիժոր, հասարակական գործիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Գևորգ Բուդաղյանին (պարտիտուրի ընթերցում)։ «Հիմնականում իմ ուսումնառության հինգ տարիների ընթացքում այս մարդիկ են եղել իմ լավ հիշողությունները Կոնսերվատորիայից, նրանք են ինձ սովորեցրել և լավ են սովորեցրել»: Հեղինակն այս ենթաբաժնում ներկայացրել է նաև այն փաստերը, որ ընդամենը 22 տարեկանում մրցույթով և ՀԽՍՀ լուսավորության մինիստրության հրամանով աշխատանքի է ընդունվել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոն՝ որպես դիրիժոր, աշխատանքային իսկ առաջին տարվա ընթացքում ղեկավարել Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի «Շեհերեզադեն», Յ. Ա. Կյուրի «Կոշկավոր կատուն», Ա. Գ. Ռուբինշտեյնի «Դևը» և, ամենակարևորը, Պ. Բ. Չայկովսկու «Եվգենի Օնեգինը»՝ երիտասարդ երգիչների մասնակցությամբ: Այս անդրադարձել է ֆիլիարմոնիայում կայացած համերգներին, Թբիլիսիի և Խորհրդային Միության տարբեր երկրներում կայացած հյուրախաղերին, հայտնի մենակատարների հետ ունեցած էլույթներին, 1956 թվականին Մոսկվայում «Հայ արվեստի տասնօրյակին» օպերայի մասնակցությամբ:

«Մոսկվա» բաժնում դիրիժորը կարևորել է 1963 թվականին Հայաստանի լուսավորության մինիստրության կողմից Մոսկվա գործուղումը և կոմպոզիտոր, դիրիժոր Իգոր Մարկելիչի դիրիժորական վարպետության

բարձրագույն դասընթացներին մասնակցությունը:

«Մարտով» ենթաբաժնում հեղինակն անդրադարձել է ՌԽՖՍՀ մշակույթի նախարարության հրամանով Մարտովի օպերային թատրոնում որպես գլխավոր դիրիժոր նշանակմանը, մեկ տարի հետո Մոսկվայի Մեծ թատրոնում և Սոչիում կայացած հյուրախաղերին մասնակցություն և Սոչիում կայացած հյուրախաղերին և Ռադիոյի պետական սիմֆոնիկ նվագախմբում գլխավոր դիրիժորի պաշտոնում նշանակվելուն, 1966-1969 թվականներին Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության նորաստեղծ նվագախմբում գլխավոր դիրիժորի պաշտոնում աշխատելուն, Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում մշտական դիրիժորական կոլեգիայի ղեկավար և գլխավոր դիրիժոր նշանակվելուն: Նա ներկայացրել է մի քանի աշխատանքային փաստեր ևս. Կոնսերվատորիայում մինչև կյանքի վերջին օրերը նվագախմբային և զինվորական դիրիժորների, օպերային պատրաստման ամբիոններում դասախոս աշխատելու, Կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարելու, օպերային ստուդիայում աշխատելու մասին: Հեղինակը հպարտությամբ նշել է իր մասնակցությունը Երիտասարդական նվագախմբի ստեղծման աշխատանքներին և հետագա ստեղծագործական խնդիրների լուծմանը:

Գրքի երկրորդ՝ «Ինքնակենսագրականը կատակներում», բաժնում Յ. Դավթյանը մտորումների, հուշերի և դեպքերի նկարագրությամբ ներկայացրել է իր ժամանակի կարևոր իրադարձությունները, ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Միքայել Թավրիզյանի և Ալեքսանդր Մելիք-Փաշայանի, Կոնստանդին Սարաջյանի, Հովհաննես Չեքիջյանի և այլոց հետ բարեկիրթ հարաբերությունները, մասնագիտական և մարդկային շփումները, նրանց հետ կապված զավեշտական պատմությունները: Հեղինակը կատակների ոճով ներկայացրել է տարբեր տարիների կարևոր իրադարձությունները, ապագա երաժիշտներին փոխանցել մասնագիտական արժեքավոր խորհուրդներ, ներկայացրել հետաքրքրաշարժ դրվագներ, փաստական նյութի միջոցով ճշգրտել տարբեր հոդվածներում իրեն վերաբերող առկա անճշտությունները:

Այս բաժնում են ընդգրկվել նաև Յ. Դավթյանի որդու Հայկ Դավթյանի և դստեր Հ. Բարխուդարյանի հակիրճ ակնարկները՝ նվիրված սիրելի հայրիկին:

Ինչպես հայտնի է, 1980 թվականին լույս է տեսել ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ռադիոյրագրող Վարուժան Ղլուզյանի «Յուրի Դավթյան» գրքույկը, որը հրատարակել է Հայ թատերական ընկերությունը: Գրքի այս բաժնում գետեղվել է նաև կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Սերգեյ Համբարձումի Աղաջանյանի՝ այդ գրքույկի համար գրված առաջաբանը (էջ 171):

Հավելված բաժնում տեղ են գտել Յ. Դավթյանի ղեկավարած ներկայացումների և սիմֆոնիկ ստեղծագործությունների համառոտ ցանկերը, նրա ղեկավարությամբ ձայնագրությունների ցանկերը, կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը, ինչպես նաև նրա որդու՝ Հայկ Դավթյանի մասին հոդվածները:

# Նվիրվում է Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյա հոբելյանին

Այսպիսով, գիրքը հանրագումարի է բերում տարիներ շարունակ դիրիժորական արվեստի բնագավառում հեղինակի երկարամյա մասնագիտական գործունեության արդյունքները:

Գիրքը ժամանակակից երաժշտության պատմության ուսումնասիրության գործում, անկասկած, կարևոր ներդրում է, որը, կարծում ենք, ամուր հիմք կհանդիսանա Յուրի Դավթյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը արժևորող մենագրական աշխատանքի համար և կնպաստի նրա արդյունաշատ գործունեության լուսարանմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ, Էջեր օրագրից. Մեկդարյա պատմություն, կազմող, մասնագիտական և պատասխանատու

խմբագիր Գոհար Կառլենի Շագոյան, Եր., ԵՊԿ հրատարակչություն, 2024 թ., - 216 էջ:

Yuri Davtyan, Extracts from the Diary. A Centuries-old History., an autobiographical and illustrated book., /Compiler, professional and managing editor., Gohar Karlen Shagoyan., Yer.: YSC Publishing house., 2024., - 216 p.

## REFERENCES

1. Yuri Davtyan, Eejer oragritz. Mekdarya patmuthyun. inqnakensagrakan, patkerazard girq / Y. Davtyan. /Kazmoggh, masnagitakan ev pataskhanatu khmbagir G. K. Shagoyan., Yer.: YPK hratarakchuthyun., 2024 th., - 216 ejj.

**Հեղինակի մասին.** ԼԻԼԻԹ ՌՈՒԲԵՐՏԻ ԱՐԵՄՅԱՆ – արվեստագիտության թեկնածու: 2007 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետը (ղեկավար՝ պրոֆեսոր Անահիտ Բոգդանյան), սպա 2011-ին՝ նույն հաստատության ասպիրանտուրան «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Մ. Ա. Կոկժաև): 2012թ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում նա պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «20-րդ դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները» (ՇԷ.00.02 - «Երաժշտական արվեստ») թեմայով (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Միխայիլ Կոկժաև) և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (2013): Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ 2015-ին հրատարակվել է նրա «XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները» մենագրությունը: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նոր և նորագույն շրջանի հայ երաժշտությունը: Զեկուգումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հեղինակ է մենագրության և շուրջ 45 գիտական հոդվածների:

**About the author:** LILIT ROBERT ARTEMYAN PhD in Art History. In 2007, she graduated with honors from the Piano Department at Yerevan State Komitas Conservatory (Professor Anahit Bogdanyan's class). In 2011 she completed her post-graduate studies at Yerevan State Komitas Conservatory, specializing in Musical Arts (supervisor - PhD in Art History, Professor M. Kokzhaev). In 2012 she defended her thesis at the Institute of Arts of the National Academy of Sciences of Armenia on "Performing Challenges in Piano Works of Armenian Composers Written in Compositional Techniques of the 20th Century" (supervisor Ph. D in Art History, Professor M. Kokzhaev) and was awarded the academic title of PhD in Art History (2013). In 2015, by decision of the Academic Council of the Institute of Arts of the National Academy of Sciences of Armenia and with the financial support of the Youth Foundation of Armenia, the monograph "Performing Challenges in Piano Works of Armenian Composers Written in Compositional Techniques of the 20th Century" was published, as part of a young scholars support program. Lilit Artemyan's research interests include Armenian new and contemporary music. She has presented papers at national and international conferences. She is the author of a monograph and about 45 scientific articles.

**Об авторе:** ЛИЛИТ РОБЕРТОВНА АРТЕМЯН, кандидат искусствоведения. Окончила: с отличием фортепианный факультет Ереванской государственной консерватории им. Комитаса, класс профессора Анаит Богданян (2007); аспирантуру ЕГК по специальности "Музыкальное искусство", научный руководитель кандидат искусствоведения, профессор М. Кокжаев (2011). Защитила диссертацию в Институте искусств НАН РА по теме "Проблемы, исполнительства в фортепианных произведениях армянских композиторов, написанных в композиторских техниках XXвека", научный руководитель канд. искусств., проф. М. Кокжаев (2012), кандидат искусствоведения (2013). Автор монографии "Проблемы, исполнительства в фортепианных произведениях армянских композиторов, написанных в композиторских техниках XXвека" (2015) и около 45 научных статей. Область научных интересов Лилит Артемьян включает армянскую музыку нового и новейшего времени. Выступала с докладами на республиканских и международных научных конференциях.